

«Ս. Ժողովս կ'որոշէ հետեւեալ պատաս-
խանք տալ, եթէ հաճոյ թուի Նորին Սրբու-
թեան .

1. Հայերը կարող են եկեղեցական պե-
տութեան եւ ուրիշ քրիստոնեայ իշխաններու
հողերու վրայ իրենց ծախքով կայաններ կա-
ռուցանել եւ փոխադրել հոն իրենց վաճառք-
ները, զորոնք կը ցանկան տարածել քրիստո-
նեայ աշխարհներու մէջ :

2. Կ'որոշէ Ս. Ժողովս, որ այս թոյլտուու-
թիւնը շնորհուի այն վաճառականներուն
միայն, որոնք կաթողիկէ են եւ կամ ըլլալ
կ'ուզեն . կրնան անոնք եկեղեցական պետու-
թեան մէջ կանգնել կայաններ նաւահանգստի
ազատութեան կամ մաքսէ ազատ ըլլալու իրա-
ւունքով (franchitia) : Եւ որպէս զի անոնք
նոյն իրաւունքով ուրիշ քրիստոնեայ հողերու
(dominia) վրայ ալ կարենան հաստատուիլ,
կարելի է այն իշխանութիւններուն համառո-
տադիր կամ յանձնարարադիր դրել :

Այս որոշումը երկու նպատակ կը հետա-
պնդէ . մին է եկեղեցական եւ երկրորդը քա-
ղաքական : Եկեղեցականն է որ այն մեծաթիւ
հայութիւնը կաթողիկէ վաճառականներու
միջնորդութեամբ կը կարենայ եւտիքեան հե-
րեափկոսութենէն կաթողիկէ եկեղեցւոյ ծոցը
առաջնորդուիլ : Քաղաքականն է որ անոնց
վաճառականութեամբ կարելի կ'ըլլայ քրիս-
տոնեայ երկիրներուն դանազան իրեր, մանա-
ւանդ մեծաքանակ մետաքս մատակարարել» :

Նոյնը ուրիշ խմբադրութեամբ կը կրկ-